

## 104. ԱՄԵՆԱԽԵԼՈՔ ՄԱՐԴԸ

Թե ոնց ա ըլըմ, օրերից մի օր մի թաքավորը հրամայըմ ա իրա երգրի ծերերին սըպանեն։ Դե թաքավորի հրաման ա, ո՞վ կարա դեմ կանգնի, ինչքան պառավ ա ըլըմ, սպանըմ, սուրդուն են անըմ։

Շատ ա անց կենըմ, քիչ, մի օր էլ թաքավորի քաղքըմը մի չանավար վագրն ա լիս աշխարք ընգնըմ, սկսըմ ա ժողովրդին կըտորիլը։ Քաղաքի մեջտեղը մի աղբուր ա ըլըմ, էդ անտերը նստըմ ա աղբրի կողքին, ու ոչ մի մարդ ռիսկ չի անըմ ջրի գնա։ Դե տղա ես մոդացի, ձեռաց փշրտորըմ ա։ Սիրտ չեն անըմ էդ անօրեն գաղտնին սըպանեն։

Թաքավորի զինվորներից մինը, մի չահել տղա, իրա հորը թաքուն պահած ա ըլըմ։ Գնըմ ա էդ զուլումի մասին հորը պատմըմ, թե.— Այ հեր, վագրը ժողովրթի գլխին պատիժ ա գառել։

Հերը տղին ասըմ ա.— Այ տղա, ես որ դուս գամ, թաքավորը կիմանա հա՞մ իմ գլուխը կտա, հա՞մ էլ քունը։ Էդ զուլումիցն ազատվելու հնարը գիդեմ, ոնց ասեմ, նհենց էլ կանես։ Մի մենձ հայլի վեր կունես, կտանես վագրի վրա։ Գազանը հենց որ իրա պատկերը տենա, կսարսափոտի, հենց կիմանա մի ուրիշ գազան ա իրա վրա հարձակվըմ, կթողա, կփախչի։

Ոնց որ հերն ասըմ ա, տղեն թհենց էլ անըմ ա։

Վագրը հենց որ իրա պատկերը տեսնում չի՞, գլուխն առնում ա, կորչում, հլա ուրիշից էլ շորս ոտն ա փոխ առնում։ Էն գնալըն ա ըլում, որ գնում ա։ Ժողովրդի աչքը լիս ա գալի։

Թաքավորն էդ բանն իմանում ա, ձեռաց գլխի ա ընգնում, որ ըսսի մի բան կա, էդ ջահելի արած բան չի, ծերերին էլ սրպանել են։

Էդ տղին կանչում ա ու թե.— Այ տղա, էդ քու խելքի բան չէր, հլա դուղն ասա, ո՞վ ա սրվորցրել, որ թհենց վագրին փախցրնեն։

Տղեն ի՞նչ կարա անի, ահը սրտըմը պատասխանում ա.— Թաքավորն ապրած կենա, վերև աստված, ներքև դու, ասսուց թաքուն չի, քեզանից ինչ թաքուն ըլի։ Որ դու հրամայեցիր ինչքան ծեր մարդ կա՝ սրպանեն, իմ ձեռը վրա չեկավ. հորս սպանեցի ոչ, քու ստրուկն եմ, ինչ ուզում ես արա, էդ բանը հերս սվորցրուց։

Թաքավորը տղի թիգունքին տալիս ա ու ասում.— Ամենախելոք մարթը դու ես, որ քու հորը սրպանել չես։